



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1875 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Գ.

23 ՄԱՅԻՍ 1875



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Թ. ԳԱՎԱՅԵԱՆ

1875

Ստեփան Արարանեան	ժաշակ	Ա. ԱՏԵՆԱԳԵՏ
Ռուսինեան	էֆէնտի	Բ. »
Քրիստոստուր Ղազարոսեան	»	Գ. »
Համբարձում Ալաճաճեան	»	Ա. ԱՏԵՆԱԳՊԻՐ
Գարեգին Մելիքեան	»	Բ. »
Պօղոս Պառնասեան	»	»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՆՍՏԱՆՍՏԱՆԻ ԿՈՆՍՏԱՆՍՏԱՆԻ ԿՈՆՍՏԱՆՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՆՍՏԱՆՍՏԱՆԻ ԿՈՆՍՏԱՆՍՏԱՆԻ ԿՈՆՍՏԱՆՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՆՍՏԱՆՍՏԱՆԻ ԿՈՆՍՏԱՆՍՏԱՆԻ ԿՈՆՍՏԱՆՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՆՍՏԱՆՍՏԱՆԻ ԿՈՆՍՏԱՆՍՏԱՆԻ ԿՈՆՍՏԱՆՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՆՍՏԱՆՍՏԱՆԻ ԿՈՆՍՏԱՆՍՏԱՆԻ ԿՈՆՍՏԱՆՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՆՍՏԱՆՍՏԱՆԻ ԿՈՆՍՏԱՆՍՏԱՆԻ ԿՈՆՍՏԱՆՍՏԱՆԻ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՆՍՏԱՆՍՏԱՆԻ ԿՈՆՍՏԱՆՍՏԱՆԻ ԿՈՆՍՏԱՆՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՆՍՏԱՆՍՏԱՆԻ ԿՈՆՍՏԱՆՍՏԱՆԻ ԿՈՆՍՏԱՆՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՆՍՏԱՆՍՏԱՆԻ ԿՈՆՍՏԱՆՍՏԱՆԻ ԿՈՆՍՏԱՆՍՏԱՆԻ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1875 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Գ.

23 ՄԱՅԻՍ 1875

ՆԱԽԱԳԱՀ. — ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ՍՐԲԱՅԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ
ԱՏԵՆԱԳԵՏ. — ՍՏԵՓԱՆ ՓԱՇՍԱՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

- 1. Գրեգոր Եպիսկ. Բ.
- 2. Խորեն և Նար Պէժ
- 5. Ամբրոսիոս Վ. Ռուսինեանց
- 4. Գարեգին և Թաթարեան Բ.
- 5. Խորեն և Կիրայեանց
- 6. Կարապետ և Սերոբեան Բ. Պ
- 7. Հմայեակ և Գիմարեան Բ.
- 8. Մատթէոս և Իզմիրլեանց
- 9. Յովհաննէս և Փափաղեան
- 10. Ներսէս և Ասլանեան Բ. Պ
- 11. Արևատակէտի Մամբրեան Բ. 2
- 12. Գեորգ և Արծրունի Բ. Պ
- 15. Գրեգոր և Աճէմեան
- 14. Խորեն և Փէշկովանեան
- 15. Յարութիւն և Սերոբեան
- 16. Յովհաննէս և Մկրեան Բ.
- 17. Սուքիաս և Ստեփաննոսեան
- 18.
- 19.
- 20.

ԱՏԵՆԱԳԵՏԱԿԱՆՔ

(Ա. Վիճակ)

Գրողներ, Կեանքի ժաշակ և Գրողներու շնորհ

21. Բարթող Բիւրբիպաշեան Բ. 2

- Բ. Բացակայութիւն առաջին
- Բ. 2 Բացակայութիւն երկրորդ
- Բ. Պ Բացակայութիւն բանաստեղծական
- Հր. Հրատարակ

- 22. Գեորգ Ստամբուլեան
- 25. Գրեգոր Պէրպլեան Բ. 2
- 24. Եսայի Անուխեան Բ.
- 25. Մանուկ Արապեան Բ. Պ
- 26. Յակոբ Յրէնկեան Բ. 2
- 27. Պետրոս Քէրէթեան Բ. 2
- 28. Պօղոս Ժամկոչեան Բ. 2
- 29. Պօղոս Ճիւղեան Բ. 2
- 50. Պօղոս Պառնասեան
- 51. Ռուսինեան
- 52. Սենքերիմ Մանուկեան Բ. 2
- 55.
- 54.
- 55.
- 56. (Բ. Վիճակ)

(Բ. Վիճակ)

Պէշկովաշ

- 57. Բարսեղ Հալաճեան Բ.
- 58. Կարապետ Ս. Իւթիւճեան
- 59. Յարութիւն Մարգարեան
- 40.

Երկնգալիտ

- 41. Խաչատուր Ղազարոսեան
- 42. Կարապետ Գ. Փափաղեան Բ. Պ
- 45. Համբարձում Իսկիճեան Բ.
- 44. Մարութ Յրէնկեան

Իրակիտար Ս. Խաչ

- 45. Յովհաննէս Շահեան
- 46. Յովսէփ Ս. Մալլաճեան Բ.
- 47. Սերոբեան Պառնասեան
- 48. Ստեփան Ասլանեան

Իրակիտար Ս. Կարապետ

- 49. Միհրան Պաշտմաճեան Բ.
- 50. Յովհաննէս Ճիւղեան Բ.
- 54. Նիկողոս Ալաճաճեան
- 52. Տրդատ Փափաղեան (Գ. Վիճակ)

Յերա

- 55. Արիկ Ունեան
- 54. Գրեգոր Սէլիմեան Բ.
- 55. Մարտիրոս Յ. Տիլեան Բ.
- 56. Միքայէլ Մամիկեան
- 57. Նշան Բաղաղեան Բ.
- 58. Ստեփան Խնդիրեան Բ.
- 59. Տէրմար Մ. Էրտերեան Բ. Պ
- 60.
- 61.

Գրողներ ժաշակ

- 62.

Միջոցառող

- 65. Կարապետ Պ. Պէրեանց
- 64. Յակոբ Կոստանդեան Բ. Պ
- 65. Յակոբ Պ. Նորատուկեան Բ.
- 66. Յովհաննէս Աղայեան
- 67. Տիգրան Եւսուֆեան Բ. Պ

Պէշկովաշ և Ղալաթիա

- 68. Յարութիւն Մէրեթ—Գուլի

(Գ. Վիճակ)

Ղուղղունանի և Իմաստիկ

- 69. Յովհաննէս Լաւեան
- 70. Ստեփան Պէշկեան

Գատրգիոյ
 74. Կարապետ Կապուչեան Բ. 2
 72. Մկրտիչ Մուրաթեան Բ. 9
 Կարապետ
 75. Յակոբ Եւսեփեան Բ. 9
 Ենիմահալի Մանաթիոյ
 74. Օգոսէն Խոստարեան Բ. 2
 Թոփղապիտ
 75.
 Էդուարդ Մ. Երիս և Մ. Աստուածաձիւն
 76. Գարեգին Յ. Մեղիքեան
 Գոռնուհեղձիկ
 77. Աստուած Իկիտապեան
 Հիսար և Պորաճի գիւղ
 78.
 Կոր գիւղ և Սթեփան
 79. Ղազար Հովսեփեան
 Պարսա
 80. Աստուած Գուշտապեան
 84. Մկրտիչ Գ. Էսաեան Բ. 9
 82. Յովհաննէս Կրճիկեան
 Քարապետիկ
 85. Յարութիւն Զեմեթեան Բ.
 84. Յարութիւն Գ. Տատեան Բ.
 (Ե. Վիճակ)
 Մանաթիոյ
 85. Աւետիս Քուրեան Բ. 9
 86. Եղիազար Մեղիքեան Բ. 9
 87. Յակոբ Քաղապեան Բ. 9
 88. Նազարէթ Կապուչեան
 89.
 90.
 91.
 92.
 93.
 94.
 Խասապիոյ
 95. Աւարել Ալթուն Տիւրքի
 96. Խաչատուր Պ. Միսաքեան
 97. Ռեթեոս Պէլեկեան
 98. Սարգիս Արապեան Բ.
 99. Սեմեմ Միքայէլեան Բ.
 100.

ԳԱԻԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ
 Կարիճ
 104. Մանուկ Աւրանեան
 Գեօթանեան
 102. Մեսրոպ Յ. Այվաթեան Հր.
 Կորիսանուպոլիս
 105. Ռուբէն Կրճիկեան Բ.
 Ենիմահալի
 104. Տէրեան Կրճիկեան Բ. 2
 Ալի
 105. Պետրոս Միսաքեան Բ.
 Հարախիսար
 106.
 Արաքիւր
 107. Կարապետ Խաչիկեան Բ.
 Բաղիշ
 108.
 Պրոսպա
 109. Քրիստոսաւոր Ղազարեան
 Երզնկիս
 140. Մեղքն Հալաճեան
 Ամասիս
 141. Համբարձում Ալաճաճեան
 Բաղոս
 142. Յովհաննէս Ալաճաճեան
 Երզնկիս
 143. Մանաթիոյ
 144.
 Հաճըն
 145.
 Երզնկիս և Բարնոյ
 146.
 Թեքրիստապ
 147. Տէրեան Գ. Սեմեմեան
 Կիսարիս
 148. Մատթէոս Մ. Այվաթեան Բ. 9
 Խարախոյ
 149. Յովհաննէս Երզնկեան Բ.
 Պալաքիս
 140. Յովհաննէս Յովհաննէս

Մոռ
 121. Սեփեան Պ. Պ. Փափաղեան
 Տիպիկ
 122. Պոլոս Մովսէսեան Բ. 2
 Զեյթուն և Մարաշ
 125.
 Տրապիզոն
 124. Մկրտիչ Կրճիկեան Բ.
 Պարոտա
 125.
 Տիգրանակերտ
 126. Թադէոս Թեքեան
 Վան
 127. Սեմեմ Մարտապեան Բ. 9
 Աղթամար
 128.
 Հալիս և Ալաթիս
 129.
 Մեքստիս
 150.
 Տրապիզոն
 154.
 Կարս
 152. Աբրահամ Յ. Այվաթեան
 Զեյթուն
 153. Համբարձում Սարգիսեան
 Կարապետ
 154.
 Աստուած
 155. Սեմեմ Պ. Նորատուրեան
 Մըղիս
 156. Մատթէոս Ալաճաճեան
 Երզնկապոլիս
 157.
 Մարաթիս
 158.
 Իզմիր
 159.
 Երզնկապոլիս
 140.

ՕՐԱԿԱՐԳ

Ա. Կարապետիկ Կարապետիկ զիսանց :

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ատենապետ փաշան ատենը բացաւ ժամն 7 1/2 ին , ի ներկայութեան 45 երեսփոխանաց , (որոց թիւն ի վերջոյ 50 ի հասաւ) , հետեւեալ ատենախօսութեամբ :

« Սրբազան Հայր եւ Տեառք երեսփոխանք .

« Ամէն բանէ առաջ պարականութիւն մը ունիմ առ ժողովն , զոր քաղցր է ինձ կատարել , եւ զոր վստահութեամբ կատարել . այն է՝ շնորհակալութիւնս ընծայել Ձեր ինձ ցոյց տուած վստահութեան եւ ըրած պատուոյն համար . զիտեմ որ այս իմ արժանեաց արգասիք չէ , այլ քաջակերութեան քուէ մը զոր տուած էք Ձեր մէկ հինօրեայ բայց նորեկ ընկերին , Այսու գօտեւորեալ , ուխտեմ կատարել խղճի մտք իմ պաշտօնս որ միակ է , այսինքն օրինաց հետեւելով ժողովն ըստ կանոնի ղեկավարել , եւ զոր ղիւրութեամբ կատարել յուսամ եթէ դուք ձեր կրկին պարտաւորութիւնը կատարել ապախտ չառնէք , այն է՝ ձեր ընտրած ատենապետին յօժարամիտ հետեւել , միանգամայն անոր թերութեանց ներողամիտ ըլլալ , եթէ այսպէս երկուստեք պարտիք կատարուին , ժողովն իր նուիրական պաշտօնը յաջողութեամբ զլուխ տանելու ճամբան կը մտնէ : Ինչ է ժողովին պաշտօնը . հարկ չը կայ երկայն բացառելու . ժողովին պարտքն ու պաշտօնն է Ազգին անցեալին աւանդապահ ըլլալ , ներկայն տնօրինել եւ ապագայն պատրաստել : Տեառք իմ , զիտեմ որ մեր այս պաշտօնը կատարելու որքան բարեյաջող միջոցներ պարգեւած են մեզ

երկինք : - Կապուչեան Տէրութեան մը հովանոյն ներքեւ , որ մեր առանին գործերը մեր ողբով անօրինելու արտօնութիւնը շնորհած է մեզ , եւ իր ընդարձակ սահմաններուն մէջ վայրենաբարոյ վրանարնակ Ազգաց քով խաղաղասէր , աշխատասէր եւ եւրոպական կարգօք կանոնօք բարեկարգեալ ազգեր պատասպարելով եւ զամենն ալ կառավարելով Աշխարհ կը զարմացունէ իր ազատամիտ եւ վեհանձն աշխարհավարութեամբ : Ունինք Պատրիարք մը որ իր եկեղեցական կոչման արժանավայել խնկելի բարեմասնութեանց հետ , տղգասիրական եռանդով վառ հոգի մը եւ ժամանակիս վայելուչ ուսմամբք եւ գիտութեամբ մշակեալ միտք կը կրէ , եւ իր հեղահամարոյր բնաւորութեամբ ու ուղիղ եւ ճարտար քաղաքագիտութեամբ՝ տէրութեան , նախարարաց , ազգայնոց , օտարաց , բարեկամաց եւ մինչեւ իսկ ատելեաց սիրտն իրեն գրաւած է , եւ որ այսպէս ամենուն սիրովն ու ակնածութեամբ շրջապատեալ զահէն ինքնակամ հրաժարման առաջարկութեամբք Արարատ աշխարհ կը զարմացնէ : Ունինք օրէնք մը , Սահմանադրութիւնը որ այսօր հին ու նոր աշխարհի մէջ մեծ ու պղտիկ բազմազան ազգեր կկառավարէ : Ունինք ներքին կանոնադրութիւն մը , շնորհ ազնուամիտ եւ ազգասէր անձանց , որ այսօր հզօր Բաղամէնդներ կառավարելու կը բաւէ : Ինչ կը պակսի մեզ ուրեմն յաջողելու . եթէ ոչ , բարի կամք , աշխատասիրութիւն , եւ առաւել քան զամենայն յարատեւութիւն ջանից : - Օն ուրեմն , Տեառք , ձեռն ի գործ արկանենք , եւ աշխատինք Սահմանադրութեան այս 154- շրջանին մէջ ճշ-

Իր-----իւն յիւն

S. Մատթէոս վարդապետ Իզմիրլեան քուէ 42
 S. Գրիգոր քահանայ Աճէմեան » 47
 Սենեքերիմ էֆէնտի Մանուկեան » 41

Ն-ի-ի-ի-ի-ի-ի-ի-ի-ի յիւն

Կարապետ էֆէնտի Շահպաղեան քուէ 47
 Յովսէփ էֆէնտի Մազլլուեան « 46
 Ստեփան էֆէնտի Փափազեանց « 40

Ի-ի-ի-ի-ի-ի-ի-ի-ի-ի յիւն

Կարապետ էֆէնտի Իւթիւճեան քուէ 47
 Խաչատուր էֆէնտի Միսաքեան « 46
 Յարութիւն էֆէնտի Մէրեճիմ-գուլի « 42

դովին թէ Վարչութեան Քաղաքական Ժողովն արդէն յառաջ քան զհամարատուութիւն փութացեր է իւր հրաժարականը զրկել, որ եւ կարգացուեր է ժողովոյ ներկայ շրջանին Ա. նստին մէջ, ինչպէս նոյն նստի ատենագրութեան մէջ կերեւնայ, եւ առանց անոր վրայ խօսք մ'ըլլալու Նախաքննիչ զիւանաց կազմութենէն ետեւ մնալն որոշուեր է: Արդ՝ Նախաքննիչ զիւանաց կազմութիւնը կատարուած, եւ այս հրաժարականի խնդիրն ըստ օրինի Երաւասութեան զիւանին յղել հարկ ըլլալով, եթէ խօսք ուզող չկայ այս մասին, կառաջարկեմ յանձնել զայն Երաւասութեան զիւանին:

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՅ.— Զգիտեմ թէ Երաւասութեան զիւանին յանձնուելիքն ինչ է. եթէ լաւ կը յիշեմ, Քաղաքական Ժողովն իւր գրոյն մէջ ըսած է որ համարատուութիւնը պիտի պատրաստէ եւ ներկայացնէ, եւ թէ՛ իւր պաշտօնավարութեան շրջանը լրացած ըլլալով, մինչեւ ամսոյն վերջը պիտի շարունակէ, եւ այնուհետեւ կ'հրաժարի: Ուրեմն Նախաքննութեան յանձնուելիք ինչ կէտ կայ ասոր մէջ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Քաղաքական Ժողովը 1875 նոյեմբեր 25 էն սկսեալ 17 ամիս է որ պաշտօն կը վարէ եւ իւր օրինական շրջանը լրացնելու դեռ եւս ժամանակ պէտք է արդեօք ինչ պատճառաւ անժամանակ կը հրաժարի: Բնականաբար այս կէտն է քննուելիքը:

ՊԱՍՄԱՃԵԱՆ Ս. ԷՅ.— Գիտեմ որ ներկայ Քաղ. Ժողովն իւր նախորդին շարունակութեանը համար ի պաշտօն կոչեցաւ, եւ Օրէնքըն ալ այնպէս կը տրամադրէ որ յաջորդն իւր նախորդին տարածամ դադարմանը պատճառաւ անոր շարունակութիւնը համարուի: Ուստի քանի որ նախորդին շրջանը լրացած է, յաջորդին ալ լրացած պէտք է համարուի:

S. ՄԱՏԹԷՈՍ ՎԱՐԳ.— Ներկայ Քաղ. Ժողովն եթէ նախորդին շարունակութիւնը պիտի համարինք, պէտք էր որ 74 ի ապրիլին վերջը հրաժարէր. քանզի իւր նախորդն 72 ին մէջ սկսած ըլլալով 74 ին կը լրանար իւր պաշտօնը. եւ որովհետեւ նախորդը մէկ տարիէն քիչ աւելի պաշտօն վարեց եւ ներկայն 73 ին վերջին սկսաւ վարել իւր պաշտօնը, նախորդին պակասը լրացուց մինչեւ 74 ապրիլի վերջն, անկէց վերստին նոր շրջանով մը սկսաւ շարունակել եւ դեռ տարի մը ժամանակ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Նախագահ Սրբազան Զօրմէ կը խնդրեմ, իւրաքանչիւր Նախաքննիչ զիւանի անդամները պաշտօնական գրով հրաւիրել, որ ատեան կազմեն եւ իրենց ատենապետներն ընտրելով անոնց անուններն Մայր զիւանին հաղորդեն: Միանգամայն Ս. Պատրիարքը շնորհք կրնէ նախընթաց շրջանին մէջ Նախաքննութեան յանձնուած խնդիրներուն համար գրել նախկին զիւանաց ատենապետներուն, որ նոյն խնդիրներէն անոնք որ արդէն քննուած են, տեղեկագիրնին, իսկ որոնք որ քննութեան չեն կրցեր առնուիլ, պաշտօնական գրութիւններն ամբողջ զրկեն Պատրիարքարան, որպէս զի Մայր զիւանի յանձնուելով տեղեկագիրները Ազգային Ժողովին ներկայանան եւ չքննուած խնդրոց գրութիւնները նորընտր զիւանաց յղուին: Նոյնպէս ինչ որ արդէն որոշուած է ժողովով, ամենուն ճշգրիտ գործադրութեանը համար Պատրիարք Սրբազանէն կը խնդրեմ հոգ եւ խնամ տանիլ:

Հր-ի-ի-ի-ի-ի-ի-ի-ի-ի յիւն

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Նախաքննիչ զիւանաց ընտրութեան կատարուելէն ետեւ, զիւանս հարկ կը համարի ներկայացունել այն խնդիրներն, որոնք արդէն հասած են եւ նախաքննութեան պէտք ունին. թէեւ անմիջապէս Վարչութեան համարատուութիւնը յաջորդ նստին Օրակարգն անցնելու հարկը երկուան կեղնէ, սակայն հարկ կը համարիմ յիշեցնել ժո-

կուզէ որ իւր օրինական շրջանը բոլորէ. սակայն այս շրջանը չլրացուցած կ'հրաժարի եւ ի հարկէ իւր պատճառն ունի, զոր պէտք է հասկնալ օրինաւոր որոշում մը ընելու համար: Ուստի ինչպէս Ատենապետ փաշան առաջարկեց, նախաքննութեան յղուելէն եւ այս տարածամ հրաժարման պատճառներուն տեղեկանալէն ետքը պէտք է այս մասին վիճարանիլ եւ որոշում տալ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Քանի որ նախորդ Քաղաքական Ժողովը տարի մը եօթը ամիս կըրցեր է շարունակել իւր պաշտօնը, եւ ներկայն տարի մը հինգ ամիս միայն, ըսել է թէ մէկը միւսին շարունակութիւնը չկրնար համարուիլ եւ երկուքն ալ սահմանադրապէս իրենց շրջանը կատարած չեն կրնար նկատուիլ. ուստի պէտք է ներկայ հրաժարագիրն Նախաքննիչ զիւանին յղուի եւ յետոյ ընդունուիլը կամ չընդունուիլն որոշուի Ժողովով:

Զայս ըսելով Ատենապետ փաշան քուէի դրաւ, եւ Ժողովն 2 քուէի դէմ միաձայնութեամբ ՈՐՈՇԵՑ Քաղաքական Ժողովոյ հրաժարականն Երաւասութեան զիւանին յղել:

Ա-ը-ը-ը-ը-ը-ը-ը-ը-ը Ի-ու-ն Ժ-ու-ը-ը

Ատենապետ փաշան Վարչութեան Խառն Ժողովին կողմէ եկած մէկ գրաւոր առաջարկութիւնը ներկայացոյց՝ զոր Ատենապետը կարգաց, եւ ահաւասիկ պատճէնը:

Վսեմաշուք Ատենապետ Ազգային Ժողովոյ

Ազգային հնաւանդ սովորութիւնը կը պահանջէ որ վանքի մը միաբան գտնուող կրօնաւորին յետ մահուան գոյքը ժառանգորդացը չեթթայ, այլ իւր վանքին պատկանի: Սոյն օրինօք կը վարուի Ս. Էջմիածին, ինչպէս նաեւ Ս. Երուսաղիմայ միաբանութիւնը: Եւ այս օրէնքը նոյն իսկ Երուսաղիմայ Սրբազան Պատրիարքաց տրուած կայսերական Պէռաթովն ալ հաստատուած եւ վաւերացուած է:

Այս անգամ քանի մը վանքերէ խնդիր եղած ըլլալով Ազգային Վարչութեան՝ որ նոյն շնորհուով իրենք ալ վայելեն, եւ Խառն Ժողովն նկատելով որ Ազգ. Սահմանադրութեան մէջ այս մասին տրամադրութիւն մը չըկայ,

նոյն արտօնութիւնը միւս վանքերէց վրայ ալ տարածելու համար հարկ դատեց առաջարկել Ազգային Ժողովոյ որ այս կէտը նկատողութեան առնուլ բարեհաճի, որպէս զի Սահմանադրութեան մէջ անցնելով, յետ կայսերական կառավարութենէն վաւերացուելու իրեւ տիրող օրէնք գործադրուի ազգային ամեն վանօրէից համար: Մնամք յարգանօք

Ի զիմաց Ազգ. կրօնական Ժողովոյ Արեւ-դէր Արեւ-դէր

ՆԵՐՍԷՍ Վ. ԱՐՄԱՆԵԱՆ ԽՈՐԷՆ ԱՐՔ ԵՊԻՍԿ. ՆԱՐ ԳԷՑ

Ի զիմաց Ազգ. Քաղաքական Ժողովոյ

Փ-ի Արեւ-դէր Վ-ն Արեւ-դէր ՍՏԵՓԱՆ ԽՆԴԻՐԵԱՆ Ս. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

16 Մայիս 1875
 Ի Պատրիարքարանի Հայոց Կ. Պօլիս

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Կը տեսնէք որ Վարչութեան կողմէ եկած այս խնդիրը վանական եւ միանգամայն օրինական խառն խնդիր մ'է, այնպիսի խնդիր մը՝ որ Տէրութեան վճռով պիտի հաստատուի, ուրեմն Տէրութեան օրէնքն ալ նայիլ քննել պէտք է, որպէս զի մի գուցէ հակառակը տրամադրէ: Ինձ կը թուի թէ այս խնդիրը կալուածոց եւ միանգամայն Նախաձեռնութեան զիւաններուն պէտք է յանձնել, որ երկուքը մէկտեղ գալով քննեն, եւ եթէ նկատատութեան պէտքը յայտնեն՝ այն ատեն Ժողովին Օրակարգն անցնի եւ վիճարանուի խնդրոյն վրայ. ուստի քուէի պիտի դնեմ:

ՊԱՍՄԱՃԵԱՆ Ս. ԷՅ.— Անցեալ նստին որոշմամբ այսօրուան խնդրոց կարգը միայն Նախաքննիչ զիւանաց կազմութեան համար էր, որն որ լրացաւ. եւ սակայն Իււանն երկու խնդիր ալ հետզհետէ ներկայացնելով անոնց վրայ Ժողովին ուշադրութիւնը հրաւիրեց. կը հարցնեմ Իււանին՝ միթէ օրէնքը կը ներք որ Օրակարգին մէջ չանցած խնդիրներու վրայ ալ վիճարանութիւն ըլլայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Ստոյգ է, խնդիր մը վիճարանութեան զրուելէ առաջ Օրակարգը պէտք է անցնի. սակայն Վարչութենէն եկած ամեն խնդիր կարեւորութիւն ունի, եւ իբր ամեն խնդիր կատարուիլու համար այսու հանապաջնութիւն կատանայ միշտ. այսու հանդերձ Իււանը չէ թէ վիճարանութեան ենթար-

կելու գիտում ունի, այլ նախաբնութեան յղելու պէտք կայ թէ ոչ, այդ կէտին վրայ ժողովին ուշադրութիւնը կը հրաւիրէ. հետեւապէս քուէի պիտի գնեմ այդ կէտն:

Ձայս ըսելով Ատենապետ փաշան քուէի գրաւ, եւ ժողովը մէկ քուէի դէմ միաձայնութեամբ ՈՐՈՇԵՑ կալուածոց եւ նախաձեռնութեան միացեալ զիւանաց յղել խառն ժողովին առաջարկութիւնը:

ՀԱՆՈՒՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՆԱԲԷՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Նախորդ նախաքըննիչ զիւաններէն կան ոմանք, որոց յանձնուած խնդիրներն անպատասխան մնացած են տակաւին. եթէ ասոնց տեղեկագրերը պատրաստ են իրենցմէ առնուլ, եւ եթէ պատրաստ չեն, խնդիրներն ուղել եւ նոր զիւաններուն յանձնելու համար նախագահ Սրբազան Հօր միջնորդութիւնը խնդրեցինք: Ասկէց զատ քաղ. ժողովէն խոստացեալ համարատուութիւնը պէտք է փնտռենք. Գիւանը կիսով է նախագահ Սրբազանէն որ չնորհ ընէ Վարչութեան ամեն ճիւղերուն պատրաստել տալ իրենց համարատուութիւնը, եւ ներկայացնել Ազգ. ժողովին:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Արդէն քաղ. ժողովն իւր համարատուութիւնը պատրաստելու վրայ է, եւ իւր ճիւղերուն ալ յանձնարարած է որ իրենց համարատուութիւնները պատրաստեն:

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՅ. — Համարատուութիւն այն ատեն կըլլայ երբ պաշտօնավարութեան սահմանադրական պայմանաժամն որ 2 տարի է, լրացած է. հիմա Վարչութենէն համարատուութիւն ուղելը հրաժարականդ ալ տուր ըսել է. այս կէտը զիւանին ուշադրութեանը կը յանձնեմ:

Տ. ՄԱՏԹԷՈՍ ՎԱՐԴ. — Ստոյգ է իւթիւճեան էֆէնտիի ըսածը, թէ Սահմանադրութիւնը կը տրամադրէ որ 2 տարին անցած մը կը գումարուի Ազգային ժողովը Վարչութեան համարատուութիւնը ըսելու համար. սակայն պէտք է գիտնալ որ Ազգային ժողովը իւր ներքին Կանոնադրութիւնը միաձայն հաւանութեամբ ընդունելով ընդունեց նաեւ միամայ համարատուութեան եւ համարատուութեան ըս-

կըզբուենք, ինչպէս սահմանած է նոյն Կանոնադրութիւնը: Այս տեսութեամբ կրտեմ թէ Վարչութիւնը պարտաւոր է ըստ ներքին Կանոնադրութեան տարեկան համարատուութիւնը բերել Ազգային ժողովին:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ժողովին Կանոնադրութիւնը համարատուութեան համար տարեկան ըլլայ ըսած է. քանի որ Կանոնադրութիւնն ընդունուած է, թէեւ Սահմանադրութեան կատարելապէս համաձայն չըլլայ, պէտք է ըստ այնմ տարեկան համարատուութիւն պահանջենք: Բաց ասկէ՝ եթէ Սահմանադրութիւն եւ Կանոնադրութիւն ալ չըլլային, Վարչութեան համարատուութիւնը միշտ անժխտելի պէտք մ'է. ուղիղ բանը եւ դատողութիւնը կը պահանջեն որ գոնէ տարին միանգամ հարցընենք մեր ընտրած Վարչութեան թէ ինչ կը գործէ, որպէս զի կամ չնորհակալութիւն եւ կամ պարսաւ, որուն որ արժանի է, տեղի ունենայ: Այսու հանդերձ, կրնաք, եթէ Կանոնադրութեան փոփոխութեան պէտք կը տեսնէք, գրաւոր առաջարկութիւն ընել ժողովին, եւ հիմա անոր ճշգրիտ գործադրութեան հսկելու պարտաւորեալ եմ:

ՊՐՈՒՄՈՒՄ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽՈՒՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՆԱԲԷՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Նախորդ նախաքըննիչ զիւաններէն իրենց յղուած խնդրոց վրայօք 4 տեղեկագիրներ եկած ըլլալով, Գիւանին վրայ այսօր պատրաստ կը գտնուին. անոնք թէեւ նախընթաց շրջանին վերջին նստին մէջ ժողովին ներկայացուած են, բայց ընթերցումին նոր շրջանին մնացած է: Ուստի եթէ ժողովն ուզէ, անոնք ալ յետագայ նստին Սրակարգը անցնենք եւ փոխանակ մի առ մի կարգալու, այսօրուան տեսնադրութեան մէջ պակեալ ներկայացնենք երեսփոխանաց:

Ձայս ըսելով Ատենապետ փաշան իշխալ տեղեկագիրները թուեց մի առ մի յետագայ կարգալու:

1. Տեղեկագիր Կրտստութեան զիւանի ի վերայ Այվատեան Մատթէոս էֆէնտիի պատճառաբանեալ հրաժարագրի: — Տեղեկագրեր՝ Տ. Մատթէոս վարդապետ:

2. Տեղեկագիր Յարաբերութեան զիւանի ի վերայ աղբրագրի Տ. Գարեգին Վ. Սրուանձտեանց: — Տեղեկագրեր՝ Ալաճաճեան էֆէնտի:

3. Տեղեկագիր Դաստիարակութեան եւ Կալուածոց միացեալ զիւանաց ի վերայ Մուրատեան վարժարանին Փարիզու: — Տեղեկագրեր՝ Ղազարոսեան Բ. էֆէնտի:

4. Տեղեկագիր Նախաձեռնութեան զիւանի ի վերայ առաջարկութեանց Մարգարեան, Կրճիկեան, Կիլիկեան, Իւթիւճեան եւ այլ էֆէնտիներու: — Տեղեկագրեր՝ Ռուսինեան էֆէնտի:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՅ. — Դաստիարակութեան եւ Կալուածոց միացեալ զիւանաց կողմէ իբրեւ տեղեկագրեր կ'յայտնեմ, թէ Փարիզի Մուրատեան վարժարանի մասին տրուած տեղեկագրին իբր յաւելուած կցուելու համար տեղեկագիր մը եւս ունինք. եթէ ժողովը կրնա գունի, այդ յաւելուած մասն ալ յանձնեմ, որ պէս զի այն ալ տպագրուի տեսնադրութեան մէջ:

Ժողովն Ատենապետին առաջարկութեան համեմատ ԸՆԴՈՒՆԵՑ միաձայնութեամբ թէ Քրիստոստուր էֆէնտիի առաջարկած յաւելուածը եւ թէ միւս տեղեկագիրներն իրբեւ յաջորդ նստին Սրակարգ, ամենը մէկէն այսօրուան տեսնադրութեան մէջ տպագրեալ տեսնելու պայմանաւ:

Ահաւաստիկ յիշեալ տեղեկագիրները.

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Բ

Իր-----ութեան քեռնէ ի վերայ Այվատեան Մատթէոս էֆէնտիի պատճառաբանեալ հրաժարագրի:

Այվատեան Մատթէոս էֆէնտիի պատճառաբանեալ հրաժարագրի նկատողութեան առնելու միջոցին, Գիւանս ընկալաւ հետեւեալ բացատրութեան զիրն ալ:

Իերա 26 Յունվար 1875

Արժանապատիւ Ատենապետ Կրտստութեան զիւանի Ազգ. ժողովոյ

Ազգային ժողովոյ յունվար 17 ի նիստին մատուցուելով պատուարժան Գիւանիդ նախաքըննութեանը յղուած հրաժարագրին մէջ, իբրեւ պատճառաբանութիւն ներկայացուցած

բողոքանացս մասին, Ազգային ժողովոյ Կանոնադրութեան 117 յօդուածին համեմատ, խորհրդակից ձայնով Գիւանիդ ընթերակցելու իրաւունքս գործադրել պարտաւորեցայ երկուողիւս, իմ բռնած պաշտօնական ընթացքիս դէմ, Իւթիւճեան Կարապետ էֆէնտիին դարձեալ ի հրապարակի, իր յունվար 25 ի թերթին մէջ ըրած խել մը անհեթեթ առարկութեանց պատճառաւ, յորս՝ առանց իմ յիշած իրական կէտերս բերան առնելու դարձեալ իր խարէական ոճովը կրտէ՛ թէ իմ այդ ըրածս բողոք չէ, թէ ես բողոքելու համարձակութիւն ունեցած չեմ, թէ իմ խօսքերս վերացական են, թէ իմ այդ բողոքանացս՝ իր դէմ եղած մասը՝ լոկ իմ անձիս եւ անձնական պատուոյս վերաբերեալ բան է եւ ոչ իմ եւ ոմանց պաշտօնակցացս էրեքտիանակաւ պատուոյն եւ միանգամայն Ազգային ժողովոյ պատուոյն վերաբերեալ, թէ անցեալ դէպքերու կը վերաբերի, թէ պէտք չէ անցեալ անցքեր նորոգել եւ այլն. ուստի եւ հետեւապէս կառարկէ թէ պէտք չէ երբէք նկատողութեան առնուի իմ այդ բողոքագրիս Ազգ. ժողովոյ կողմէն:

Իմ հրաժարագրիս խօսքերը կարծեմ բաւական բացայայտ են ցուցնելու համար, թէ երեսփոխանութեան պատուոյն պահպանութեանը մասին Ս. Պատրիարքին եւ Վարչութեան ունեցած պարտաւորութիւնը յիշեցնելու նկատմամբ ըրած ընդհանուր զխոսողութենէս ետեւ, բացարձակապէս բողոք կը բառնամ Ազգային ժողովոյ առաջը, ի մասնաւորի՝ ազգային երեսփոխան Իւթիւճեան Կարապետ էֆէնտիին դէմ, անոր էրեքտիանակաւ ընթացքին նկատմամբ, եւ այն նոր դէպքերէ միայն առիթ առնելով եւ ոչ անցեալ դէպքերէ:

Աւելի բացատրեմ իմ այդ բողոքս:

Ազգային ժողովը, իր Կանոնադրութեան 105րդ յօդուածին 2րդ եւ 4րդ հատուածներուն համեմատ, Մասիսի խմբագիր եւ ազգային երեսփոխան զԻւթիւճեան Կարապետ էֆէնտին, ունկնդրաց յարձակման յայտարարութեան եւ զընկերս եւ զժողովն անարգելու յանցանացը համար պարտաւորութեան յանցանքներէն, էֆէնտիին դատապարտելէ զատ, պէտք է յանձնէ նաեւ Ազգային վարչութեան, որ նա ալ անհարգելի դատէ ու պատժէ, սա երեք պատճառներուն համար.

Նախ՝ որ զիս եւ իմ երեսփոխան պաշտօն

նակիցներէս դոմանս, Վեհ. կաթողիկոսին կաշտակարարները զրպարտելով, ոչ միայն զմեզ ունեւորեցեալ եւ անուանարկել ուղեց, այլեւ զՎեհ. կաթողիկոսը, իբրեւ զկաշտակարար:

Երբ որ զիս եւ իմ երեսփոխան պաշտօնակիցներէս դոմանս, Երուսաղեմայ Ս. Պատրիարքին Կաթողիկոսը զրպարտելով, ոչ միայն զմեզ ունեւորեցեալ եւ անուանարկել ուղեց, այլեւ բնականաբար Նորին Սրբազանութեան վրայ անեղութեան սգի գոյացնելու փորձ փորձեց, զրպարտեալ երեսփոխանացս եւ Ազգային ժողովոյ դէմ: Եւ վերջապէս

Երբ որ իր այս անասկ զրպարտութիւնները խաբէաբար իբր մեր վրայ վճռուած իրականութիւններ հոչակելով, եւ երեսփոխանութեան մեծագոյն մասը մեզի պէս տարնեալէ բազկացած ըլլալուն համար՝ զմեզ արտաքսելու տրամադիր չգտնուիլը պատճառ ցուցնելով, զԱզգային երեսփոխանութիւնը ամբողջ յերանանց ինչ, արժանիքս ու պարտքս կորստի, զպէս յերանանցնելէ հետոց, հետեւապէս եւ անոր արշաւաններն եւ ընդհանրութիւններն ազգին համար անընդունելի, եւ այլն, եւ այլն, համարուելէ, եւ այլ սոյնպիսի անչիւնական որոմներ սերմանելէ զտո, մինչեւ իսկ խաղաղութիւնը յարմարեցնելով Ազգային երեսփոխանութիւնը ԼՈՒԾԵԼ քարոզեց. եւ հետեւապէս ինչպէս նախ յայնպէս եւ պատճառ նոյնպէս եւ յետոյ զարգացող ու զարգացող հանդիսացաւ թէ Սեպտ. 28 ի եւ թէ Յուլիս 5 ի յանդուգն փորձերուն, որ փորձուեցան Ազգային երեսփոխանութեան գոյութեանը դէմ, ինչպէս եւ այնուհետեւ մինչեւ յայսօր. քարոզութիւններ՝ որ խաղաղութիւնը բերանը առնուլ չը համարձակող երեսփոխանի մը՝ պէտք է ներելի ըլլան նաեւ հրապարակելէ զայ. եւ զմինչ աւելի քան զստուգ, զընկերն եւ զփոքուն անբարեւր ըլլալու, հակառակ թէ Ազգային եւ թէ Պետական ամենայն Օրինաց:

Արժանապատիւ Հայր, կը տեսնուի որ իմ բողոքս անյնպէս պարտաւոր վերաբերեալ է, այլ երեւոյթանալիս պարտաւոր, մանաւանդ թէ անբարեւր երեսփոխանութեան պարտաւոր վերաբերեալ. անանկ որ եթէ երեսփոխան չըլլայի՝ անտարակուսելի է որ կաշտակարար եւ Կաթողիկոսի զրպարտուելի, եւ իմ պատճառաւ ալ խաղաղութիւնը յարմարեցնելու լուծումը չպիտի պահանջուէր:

Արդ՝ խնդիրը պարզ է, Ա. Վեհ. կաթողիկոսը՝ մեզի իբրեւ երեսփոխան, 25,000 մանէթ կաշտակարարութեամբ կամ ոչ:

Բ. Մեք երուսաղեմայ Ս. Պատրիարքին դէմ Տ. Երեսփայլի ձեռք տրուելէն կամ չտրուելէ, կամ ըրած ենք կամ ոչ. եւ

Գ. Ազգային երեսփոխան Իւթիւճեան կարպետ էֆէնտին՝ մեր պղպիտի զրպարտական մեղքերով մեղապարտ եւ միանգամայն երեսփոխանութեան մէջ գտնուելուն համար, Ազգային ժողովը՝ զմեզ իր մէջէն չարտաքսելը պատճառ ցուցնելով, ժողովրդային յարձակմամբ երեւոյթանալու լուծումը լուծել, կամ քարոզած է կամ ոչ. եւ այդ զիտմամբ եղած այն երկու յանդուգն յարձակումներն ալ մինչեւ յայսօր կամ կը շարունակուին կամ ոչ:

Ես ՚ի սկզբանէ ՚ի վեր Իւթիւճեան էֆէնտին հրապարակային հրատարակութեանց պատասխանելու սովորութիւնը չունիմ, բայց եթէ վերոգրեալ առարկութեանցս Բէ Բարու ուրանալ համարձակի նա Ազգային ժողովոյ առաջը եւ կամ որ եւ է պաշտօնական զիրքի մը մէջ, պատրաստ եմ ապացուցանել իր թերթերէն, որ է ըսել իր ստորագրութեանը տակ. եւ այն ոչ թէ անցեալ գէպքերու ժամանակի թերթերէն, այլ ներսէս Սրբազանի՝ Պատրիարք ընտրութենէն եւ հաստատութենէն եւ հաշտութեան ընկերն ետեւ՝ մինչ ՚ի յունվար ամսոյս մէջ հրատարակած թերթերէն. որով իմ այդ բողոքս՝ անցեալ գէպքերու վերաբերեալ չի կրնար համարուիլ, եթէ անցեալ գէպքերու վերջակէտը՝ զէթ Սրբազան Պատրիարքի ըրած հաշտութեան համարելու ըլլանք:

Մնամ ձերդ Արժանապատուութեան

Անյնուէր ճառայ
ՄԱՏԵՆՈՍ Մ. ԱՅՂԱՅԵԱՆ

Այս զիրք՝ որ Մատիտի խմբագիր Իւթիւճեան էֆէնտին յունվար 25 ի թերթին մէջ հրատարակածներուն իբրեւ պատասխան յղած է Դիւանին, բաւականապէս կը բացատրէ նաեւ անոր զրուցեան այն կէտերը, որոնց լուծարանութեանը կարօտ էր Դիւանս:
Դիւանս կը դիտէ թէ Կանոնադրութեան

1057 յօդուածին 2 եւ 4 պարբերութիւնները որ Ազգային ժողովին գոյութիւնը եւ պատուը պահպանելու տրամադրութիւնն ունին, Այս վաստան էֆէնտին յարուցած խնդրոյն բնական հետեւութեամբ, գործադրելի պէտք է նկատուին նաեւ ժողովին ատենանէն դուրս իսկ ի ձեռն նախագահ Սրբազան Պատրիարքին. վաստան զի նոյն իսկ Կանոնադրութեան 96 յօդուածը պարտք կը դնէ Պատրիարք Սրբազանին վրայ հսկել Ազգային ժողովին ներքին եւ արտաքին ապահովութեանը՝ եւ առ այս պէտք եղած միջոցները ձեռք առնուլ:

Հետեւաբար, Ազգային ժողովին գոյութեանը եւ պատուոյն դէմ, իր ատենանէն դուրս իսկ եղած որ եւ է ցոյցեր եւ հրատարակութիւններ պէտք է որ նկատողութեան առնու Պատրիարք Սրբազանը, եւ ատոնց հեղինակներն ու ոք եւ ըլլան կոչէ յատենան Ազգային Վարչութեան, մինչեւ իսկ եթէ հարկ ըլլայ՝ քաղաքական իշխանութեան միջամտութիւնը խնդրէ, վասն ներքին եւ արտաքին ապահովութեան Ազգային ժողովոյն:

Իսկ եթէ Ազգային ժողովոյն գոյութեան եւ պատուոյն դէմ եղած ցոյցերուն եւ հրատարակութեանց հեղինակն երեսփոխան ոք ըլլայ, Պատրիարք Սրբազանն ի ձեռն Ազգային Վարչութեան դատելէ ետքը, եթէ հարկ տեսնէ, ներկայացնէ Ազգային ժողովին. որպէս զի Կանոնադրութեան 1067 յօդուածին տրամադրութիւնն ի գործ դրուի նոյն երեսփոխանին վրայ:

Բայց ազգային երեսփոխանի մը դէմ իր պաշտօնավարութեանը առթիւ, ժողովին ատենանէն դուրս եղած թշնամական ցոյցերուն եւ հրատարակութեանց համար պէտք է որ նոյն իսկ երեսփոխանը բողոքէ եւ դատ պահանջէ յատենի Վարչութեան:

Դիւանս սոյն ընդհանուր սկզբանց համաձայնեցրեալայն յղել Վարչութեան՝ Այլատեան էֆէնտին պատճառարանեալ հրատարակիրը ի ընտրութիւն, ինչպէս որ բողոքարկու Այլատեան էֆէնտին ալ սոյն ընտրութիւնը կը պահանջէ իր բացատրութեան գրով: Այս ընտրութիւնը առանց Այլատեան էֆէնտին բողոքադրոյն ալ հարկաւոր է, մանաւանդ այն մասին համար, յորում Վեհ. կաթողիկոս իբրեւ կաշտակարար նկատուած է. որոյ դէմ նոյն իսկ Վեհ. կաթողիկոսն

դիւանս բողոքած եւ ընտրութիւն պահանջած ըլլալը Դիւանս ստուգեց Վարչութեան Քաղաքական ժողովոյ Դիւանէն:

7 Մարտ 1875 Արեւելի Լ Կեդիւթի
՚ի Ղալաթիա Մ. Կ. ԻԶՄԻՐԵԱՆ
ԱՐԻՍՏԱՎԵՍ Բ. ՄԱՄԲՐԵՆԵԱՆ Ե. Ս. ՄԱՂԼՄԵՆԵԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Բ

Յարգելի ընկերացիք ՚ի Մարտի 1 ընդհանուր ժողովոյ
Տ. Գործիչն ընդհանուր Սրբազանից:

Ըստ յանձնարարութեան պատկանելի ժողովոյ, Յարգելի ընկերացիք զիւանս ուշադրութեան առնելով՝ Սրբազանեանց Տ. Գործիչին վարդապետի առ Ազգային ժողովը տուած ազդերագիրն, տեսաւ որ Գործիչին վարդապետ Վանօրէից խորհրդոյ տեղեկագիրն Մշոյ Ս. Կարապետի վանուց մասին պարզեցութեանցը դէմ առ հասարակ կը բողոքէ, եւ իր քառամեայ փոխ-Վանահայրութեան հաշուց մասին կ'ըսէ թէ «Քաղաքական ժողովն իր ատենը առնելով այս խնդիրը՝ Քաղ. ժողովոյ մասնաժողովէն երկիցս պատիւ ունեցած եմ հրաւեր ընդունելու եւ ներկայանալու, ուր օրինաւորապէս հարցումներ եղան ինձ եւ բարեմտաբար ունկնդրին իմ պատասխանոյս, որ ըսել է ահա արդէն Վանական Խորհրդոյ քննած եւ լրացուցած կարծածը՝ Քաղ. ժողովն նոր ուշադրութեան առնուլ սկսած է եւ կը շարունակէ:»

Դիւանս նկատելով որ Ազգային ժողովը Օրակարգը գտնուող Կարուածոց դիւանի տեղեկագիրն մէջ Մշոյ Ս. Կարապետի վանուց խնդիրը բնականապէս ընտրութեան առնուած է, ի հարկէ իբրեւ զեռ չ'աւարտած խնդիր համարելով զայն, նկատելով միանգամայն թէ Մշոյ Ս. Կարապետի վանուց հաշուական գործողութիւնը Վանական Խորհուրդն առ Քաղաքական ժողով տեղեկագրած ըլլալով, զեռ կը շարունակուի այդ խնդրոյն վերաբնութիւնը Քաղաքական ժողովոյ մէջ, ինչպէս որ Գործիչին վարդապետ կը յայտարարէ եւ Դիւանս ալ ստուգեց Քաղ. ժողովոյ դիւանէն, որով այս անգամի վանօրէից համարանութեան մէջ Մշոյ Ս. Կարապետի վա-

նուց խնդիր չըլլալը կ'երեւայ, հետեւաբար գիւանս կ'եզրակացնէ Գարեգին վարդապետի սոյն տեղեկագիրը յղել առ Վարչութիւնն:

7 Մարտ 1875

Հ. Ս. ԱԼԱՃԱՏԵԱՆ Մ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Բ

Դաստիարակութեան և կուլտուրայի մասին Վարչութիւնը Վարչութիւնը

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր առաջարկութեամբ Փարիզու Մուրատեան վարժարանին խնդիրը Ազգային ժողովէն միացեալ գիւանացս ի նախաքննութիւն յղեալ ըլլալով, Միացեալ գիւանքս կը փութան այժմ իրենց տեղեկագիրն ներկայացնել Ազգային ժողովի:

Մուրատեան վարժարանի խնդիրը հիմէն քննելու եւ հետազօտելու համար արժան համարեցինք Թէոդորեան Գեր. Տ. Սարգիս վարդապետին քառահատոր պատմութիւնը՝ որ Մուրատեան եւ Հայկազնեան վարժարանաց վրայ հրատարակած է 1866 թուին ի Փարիզ, ծայրէ ի ծայր եւ ուշի ուշով վերձանել, որմէ լիովին տեղեկացեալ կը տեսնեմք որ ի 20-ապրիլի 1816 ի Մատրաս վախճանեալ բարեյիշատակ Աղա Սամուէլ Մկրտիչ Մուրատի յատուկ կտակագրի արդեամբ հիմնեալ է Մուրատեան վարժարանն ի Փարիզ:

Աղա Սամուէլ Մկրտիչ Մուրատ Հնդկաստանի Մատրաս քաղաքի հայազգի վաճառականն իր կտակագրին մէջ առանձին բաժին հանելով նաեւ Հայոց Ազգին որբ եւ աղքատ մանկանց դաստիարակութեան համար, իր ստացուածքին մէկ մասը (որ 1 1/2 միլիոն ֆրանգի գումարի մը կը հասնի, եւ որ յետոյ իր տոկոսներովը մինչեւ 3 միլիոն ֆրանգի մօտ բարձրացած է) կը յատկացնէ որ անոնցմով դպրատուն բացուի եւ Եւրոպիոյ յարմար տեղ գետիներ գնոյ առնուին եւ այն գետիներուն եկամուտովը՝ որչափ որ արդիւնք բերեն եւ քանի մանկանց տարեկան ծախուցը բաւական լինին, այնչափ Հայոց Ազգին որբ եւ աղքատ մանկունք յիշեալ դպրատան մէջ ձրիապէս ուսմունք եւ լեզուք ուսանին եւ իւրաքանչիւրն

դառնայ իր հայրենիքը, եւ մանկանց վրայ քահանայ ըլլալու պարտականութիւն չը դրուի, եւ հարուստ ծնողաց զաւակունքն իւրեանց ծախքերնին վճարեն, որպէս զի չըլլայ թէ զըրկուն հայոց Ազգին որբ եւ աղքատ մանկունք իրեն կարգադրեալ կտակի արդիւնքը վայելել, եւ այս դպրատան շինութիւնը՝ եւ գետիններու գնումը Վենետիկեան հարց խորհրդոյն եւ միջնորդութեան համաձայն ըլլալ կը պատուիրէ. եւ կտակակատար կը կարգէ իւր երկու որդիքը Եգուարդ Մ. Մուրատ եւ Յովհաննէս Մ. Մուրատ եւ իւր կիներն Աննա. եւ կը պատուիրէ նաեւ որ իւր բանքը եւ կամքը ամէն զէպքի մէջ Անգղիացուց օրինաց համաձայն կարգադրուին եւ ոչ այլ որ եւ իցէ ազգաց:

Ահա այս է բարեյիշատակ Աղա Սամուէլ Մկրտիչ Մուրատի Հայոց Ազգին որբ եւ աղքատ մանկանց համար ըրած կտակին իմաստը:

Բարեյիշատակ հանգուցելոյն կտակակատարք ի սկզբան կը դժկամակին կտակեալ գումարը ուղղակի Վենետիկոյ հարց ձեռքը եւ ամեն բան անոնց կամացը յանձնել, որուն համար Վենետիկեան Հարք գաղտնի հրահանգ տուած էին Թէոդորեան եւ Սօմալեան վարդապետաց այս պատճառաւ կտակին գործադրութիւնն ուղանալով, կտակեալ գումարին վրայ տոկոսներ կը բարդուին. եւ ուր ուրեմն Մատրասու Անգղիական դատարանին վճռովը կը պարտաւորին կտակեալ գումարը յանձնել Վենետիկեան Հարց, այս կտակին գործադրութիւնն այնքան ժամանակ յապաղեցնելուն համար:

Դիտել պէտք է որ այս յապաղման երկու կողմն ալ տեղի տուած են, բայց զլրսաւորաբար Վենետիկեան հարց գաղտնի հրահանգն եղած է, որուն հետեւանքն եղաւ ըստ կամաց իւրեանց, կտակեալ գումարն ամբողջ իրենց ձեռքն անցնելը: Եւ որպէս զի կտակակատարաց ապագայ միջամտութենէն ալ բոլորովին ազատ եւ աներկիւղ ըլլան, Վենետիկոյ Միաբանութիւնն կտակեալ գումարին վրայ յետոյ բանուած տոկոսէն 500,000 սուրբի, որ 1 միլիոն 250 հազար ֆրանգի չափ կընէ, կը հաճին զեղչել եւ մնացորդն ստանալ բարեյիշատակ Հանգուցելոյն ժառանգորդներէն, անոնց ձեռքէն ստորագրութիւն առնելով թէ բոլորովին հրաժարած են կտակակատար ըլլալու իրաւունքէն:

Դատին փաստաբաններն այս զեղչման զէմ կը բողոքեն, եւ կառաջարկեն որ Վենետիկոյ Միաբանութիւնը իրբեւ կտակին նենգող ինք ալ զրկուի կտակին գործադրին ըլլալու իրաւունքէն, եւ անգղիոյ կառավարութիւնը տէր եւ պաշտպան կենայ այս կտակին. Դաստաբանն իրաւունք կուտայ փաստաբանից, բայց նկատելով որ կտակընկալ Հայոց Ազգն Անգղիոյ հպատակ չէ, օրինօք չկրնար ինք միջամտել եւ ըստ որում Հայոց Ազգին որբ եւ աղքատ մանկանց ներկայացուցիչ մը հոն չկայ, որ անոր բողոքին վրայ դատարանն իրաւունքն վճռէ, կը մերժէ փաստաբանից բողոքը, բայց կը հաստատէ թէ, Հայոց Ազգին որբ եւ աղքատ մանկանց ներկայացուցիչն կրնայ բողոքել, երբ որ ուղէ. եւ Վենետիկոյ Միաբանութեան այս զեղչումը ոչընչացնել, եւ այդ գումարն իր տոկոսներովը պահանջել ժառանգորդներէն եւ ժառանգորդաց ժառանգորդներէն իսկ, եւ կտակին տէր կանգնիլ:

Վենետիկոյ Միաբանութիւնը ոչ միայն ի սկզբան այս զրկանքն ըրած է Հայոց Ազգին որբ եւ աղքատ մանկանց. այլ եւ իր ստացած գումարովը Ետալիոյ մէջ գետիներ գնելէ, եւ վարժարանը Բատուայի մէջ բանալէ ետքը, Աւստրիոյ կառավարութեանէն ի հաշուէտուութիւն ստացած հրամաններէն խուսափելով, դպրատունը լուելեայն ի Փարիզ կը փոխադրէ, եւ փոխանակ Հայոց Ազգին որբ եւ աղքատ մանկունքը կը թելու, հակառակ կտակարար բարերարին կամաց՝ ուրիշներ կը կրթէ, որոնց շատերը այս բարիքը վայելելու արժանիքը չեն ունեցած. եւ վայելողք ալ Վենետիկոյ Միաբանից հետ անձնական յարաբերութիւն ունեցողներն եղած են ընդհանրապէս: Այս մասնաւոր խնամքն ալ կտակեալ գումարին արգեանց չափովը եղած չէ:

Վենետիկոյ Միաբանութեան այս ամէն արարքը, եւ նոյն իսկ կտակեալ գումարին մէջ ըրած շոյլ եւ յոռի մատակարարութիւնը ցաւ կուտան բոլոր ազգասիրաց. հետեւաբար տեղի եւ իրաւունք կուտան ընդհանուր Ազգին՝ բողոքելու անոր ազգամիտս ընթացիցը զէմ, որ հակառակ Ազգէն մինչեւ ցարդ վայելած բազմաթիւ նիւթական եւ բարոյական ձեռնտուութեանց, այսպէս կը համարձակի Աղա Սամուէլ բարերարին կամքը ապարդիւն թողուլ, եւ իրբեւ թէ Աղա Սամուէլ Վենետիկոյ Միա-

բանից անձնական վայելմանցը համար յատկացուցած ըլլար այդ անազին գումարը, եւ Հայոց Ազգին որբ եւ աղքատ մանկունքը զրկած, Վենետիկոյ Միաբանութիւնը, կը սեւեք, վերջին տարիներս բոլորովին կը գոցէ Մուրատեան վարժարանը. եւ մինչեւ ցարդ իրեն զէմ պաշտօնական բողոքոյ ձայն բարձրացած չըլլալէն, մանաւանդ իրենց գիրքէն աւելի խրախուսուած, (ըստ որում կտակը Անգղիոյ օրինաց տակ է, Վենետիկոյ վանքը եւ Մուրատեան վարժարանի կալուածները իտալիոյ մէջ, Մուրատեան վարժարանը Զըրանսայի մէջ, իրենք Վենետիկոյ Միաբանք՝ Օսմանեան հպատակ են.) այս դատապարտելի ընթացքը կը շարունակէ եւ Հայոց Ազգին որբ եւ աղքատ մանկունքը կը զրկէ Մուրատեան բարերարին կտակին արդիւնքը վայելելէ:

Միացեալ գիւանքս կեզրակացնեն թէ,
1. Աղա Սամուէլ Մկրտիչ Մուրատ իրապէս Հայոց Ազգին բարերարութիւն ըրած է, մեծ գումար մը կտակելով Հայոց Ազգին որբ եւ աղքատ մանկանց դաստիարակութեանը, հետեւաբար Հայոց Ազգին շնորհակալութեան արժանի ըլլալով, Ազգային ժողովը ի դիմաց Հայոց Ազգին՝ որ ի Տաճկաստան՝ Աղա Սամուէլ Մկրտիչ Մուրատին յիշատակին պէտք է իր յարգանաց հաւաստիքն իր քուէովը նուիրէ:
2. Գեր. Թէոդորեան Տ. Սարգիս վարդապետն թէ ի սկզբան եւ թէ յետոյ եւ թէ մինչեւ ցարդ Աղա Սամուէլ Մ. Մուրատին բարերար կամքը ի գործ գնելու մասին տարած ջանից եւ տառապանացը, եւ ի վերջոյ այս մեծ խնդիրը՝ որպէս զի մոռացութեան տակ չը թաղուի եւ որբոց ու աղքատաց զրկանքին համար որ մը կարենայ Ազգը բողոքել, այս խնդիրը իր ամէն պարագայիւքը գրի առնելով հրատարակած եւ ընդհանուր Ազգին ծանուցած ըլլալուն համար՝ Ազգային ժողովոյց գովութեան արժանի է:
3. Վենետիկոյ Միաբանութիւնը թէ ի սկզբան եւ թէ յետոյ եւ թէ մինչեւ ցարդ Աղա Սամուէլ Մ. Մուրատին կտակն իւրացնելով եւ անոր բարերար կամացը անհաւատարիմ գտնուելով, Հայոց Ազգին որբ եւ աղքատ մանկանց զրկանք ըրած է. ուստի Ազգային ժողովը ի դիմաց որբ եւ աղքատ Հայ մանկանց որ ի Տաճկաստան, պաշտպան կանգնելով Մուրատեան կտակին

այս խնդիրն պէտք է որ յղէ Ազգ. վարչու-
թեան ինկատառուին եւ ի անօրինութիւն :

21 Մարտ 1875

Անդամք կալուածոց գիւանի .

Առէն-դէր

Բ. ՂԱԶԱՌՍԵԱՆ

Յ ԱԶՆԱՌՐԵԱՆ

Յ. ԵՄԷՆԻՃԵԱՆ

Անդամք Գաստիարակութեան գիւանի .

Առէն-դէր

Օ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Յ. Գ. ԿՈՍՏԱՆԴ

Ասոր հետ կը ներկայացնեմք կտակին հե-
տեւեալ կարեւոր մասն .

ՀԱՏՈՒԱԾՔ ԿՏԱԿԻ

ԲԱՐԵՑԻՇԱՏԱԿ

ԱԶԳԱՍԱԲՈՒԷԼԻ ՄՈՐՏՅՈՒ ՄՈՒՐԱՏԱՅ

ԿԱՐԵՒՈՐՔ Ի ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆ ՀՐԻՏԱԿԻՆ
ՍԱՀՄԱՆԵԼՈՅ Ի ՆՄԱՆԷ Ի ԿԱՌՈՒՅՈՒՄՆ
ԱԶԳԱՅԻՆ ԳՊՐՈՅԻ

« Յանուն Աստուծոյ . ամեն :

« Ես Մամուկ Մկրտիչ Մարտիրոսեան , Մար-
րասիս Հայ փառատական . մտօք՝ շրջողութեամբ եւ
խեղցորոթեամբ առողջ , գոհանամ ի յԱստուծոյ ա-
մենակարողէն , եւ սունեմ զկտակս , այսոս գրեցե-
լովս հոգակելով զվերջին կամս իմ ըստ հետեւեց-
եալ կերպի եւ որպիսութեան . ոչս ինքն .

« Եստ , սուսեղեմ զնոզի իմ ի ձեռս ամենա-
կարողին Աստուծոյ ոյ՛ ետն ինն , յոստովն ողոր-
մութեան ի յստորն վերջին :

« Երկրորդ , յօնորեմ հասարակ կերպիս եւ
մեղմ խաղով (1) թաղիչ ի կտակաւատարաց իմոց
ի վայր անոսանելոց :

« Երրորդ , իմ ամենայն աշխարհային ստաց-
ուածք , զորս կամեցաւ եւ ես ինն Աստուած , եւ
մտանիմ զնոյնս կարեալք , կամիմ զի կտակաւա-
տարք իմ յետ մահուան իմոյ՝ փասն գործ ածելոյ
զնոյնս եւ ի կտակար հատուցանելոյ զկտակ իմ ,
ի յամենայն պարագայս , բոլորովին հարատակ լինի-

1 Մարք (Խարծ) :

ցեն օրինաց , կերպի եւ սովորութեան Անգղիաց-
ոց , եւ ո՛չ այլոց ո՛ր եւ իցի ազգաց :

« Զորրորդ , ընդ այսոս անուանեմ , կարգեմ
եւ նշանաւորեմ իմ կողմից Աննայ Մամուկ Մար-
տիրոսեան , եւ իմ որդիք Հեղիարդ եւ Յովհաննէս
Մկրտիչ Մարտիրոսեան , այս իմ յետին կամաց եւ
կտակիս կտակաւատար , որ ըստ ցոռցանելոյ իմ
հաշուեցրերին՝ զպարտսն իմ հատուցանեն , եւ
արձնելիս պահուցեն . քանզի սրպիս փառատական՝
կարգաւ ամ պահել իմ հաշուեցրերքն , որ ամե-
նայն տարեւատութիւնք , տալիք եւ ստանելիք , եւ
այլոց հետ գործողութիւնքս՝ ընդ որոց եւ մասնա-
կից ամ , այնպիսի կատարեալ եւ պարզ եւ սաւա-
կերպով կցուցանի , որ փոտակեամբ ստանց
խղճմանաց եւ հաստատակս ուրանալ ամենացն
տալիք եւ ստանելիք որ իմ հաշուեցրերն չի ման :

« Հինգերորդ , տասն եւ հինգ հազար հոռն (2)
թողիմանամ իմ վերոյիշեալ երկու կտակաւա-
տարացն , այս ինքն իրարանշիւր կտակաւատարացս
հինգ հազար հոռն աստի , այսոս շիտաւորութեամբ՝
զի կտակաւատարքս ստորք կամ պարզեաւ այս ըն-
դունեցան եւ խոստովանեցան յսպիս հատուցու-
մուն կամ վարձատրութիւն փասն այս իմ կտակին
գործ ածելոյ անդամեանն , ստանց ոսկելոյ այլ ի-
մուն պահանջմանք իմ ստացուածքիցն , կամ սկիւ-
րութիւն կտակաւատար , եւ կամ առիթ գտանելոյ իմ
ստացուածքիցն ո՛ր եւ իցի շահաւորութեան ստա-
նալոյ՝ որ որ քանակութեան իմ ստացուածքն
պատկանեալ դրամ ատանց փաշի իրեանց կար-
դութեանովն պահելով . այլ կամիմ զի կտակաւա-
տարք իմ քարեպիս հաւատարմութեամբք եւ անթե-
րի կտակարն զպաշտօն կտակաւատարութեան իր-
եանց՝ փասն շահաւորութեան իմ ստացուածքն ,
արգափ իրեանց կարողութիւնն խոստանայ : Եւ ե-
թե մին կամ միս կտակաւատարացս ունիցի եւ պա-
հեցի ի ձեռին իրոսմ իմ ստացուածքն պատկա-
նութեան ո՛ր եւ իցի քանակութեան դրամ , միշտ
պարտ է ի համար արկանել զօրինաւոր փաշի և-
ցին ըստ սովորութեան օրինաւոր փաշխատա-
թեան երկրին՝ որ տեղ որ այս իմ կտակք գործ
լինեն ամոս :

1 Մեկ հոռն է 9 ֆրանք 52 հարիւրորդ :

« Վեցերորդ , ես իմ հաշուազրքումս մին որ-
քոց ստրատաց եւ տնտեսաց հաշիս սնեմ . իմ ըս-
տացուածքիցն մին հարիւր եւ յիսուն հազար հոռն
հաննեմ եւ տանեն նոյն հաշիս . եւ յետ ստացեալ
հարիւր յիսուն հազար հոռնն ստացեալ հաշիսն տա-
նելին , զոր ինչ որ ստացեալ հաշուումս տալիքս
զոսմարի՝ ստացեալ գոսմարն բոլորն թողման ամ
Հայոց ազգի որք եւ ստրատ մանկանց դպրատան
շինութեան համար , որ ըստ խորհրդոյ եւ միջնոր-
դութեան վեհապետի Հայոց միանձանց ո՛ր մի կող-
մէն Երրոսիոյ որ աշտրակ համարն գետին զնեն ,
եւ ստացեալ զնոնք անստուտ քանի մանկանց
տարեկան ծախոցն որ քսուսիսն տոյ , այնքան
Հայոց ազգին որք եւ ստրատ մանկանք ստացեալ
դպրատանն ձրիսպիս ուսումն եւ շնորք ուսանեն
եւ դասեան իրեանց հայրենիքն :

« Եւ պարտականութիւն չլինի ստացեալ դրա-
քատանն ուսանողաց վերայ քահանայ լինելոյ . քայց
եթե ոմանք իրեանց ազատ կաման յօժարեցին
քահանայութեան լինիցին :

« Եւ եթե ոմանք հարուստ անձինք եւս ազգու
Հայոց կամեցին զմանկունս իրեանց վերոյստաց-
եալ դպրատանն ուսուցանել , կարող ան , զծախ-
արն հատուցանելով . քանզի շիտաւորութիւնն իմ
փասն այս դպրատան շինութեան՝ է փասն ստրատ
մանկանց ուսուցանելոյ , այսինքն փասն նոցա զի
որոց հարքն չբարորք են , եւ փասն յարելոյ և-
ցա զծախսն դպրատան հատուցանել՝ զանց ամեն
ուսուսեք մանկանց իրեանց , եւ անմեղ մանկունքն
այնքիկ մեան գոսիք ի յամենայն ուսմանց եւ զի-
տութեանց , եւ որոյ փասն գրեթե ըստ մեծի մա-
սին անտերուցն ազգս Հայոց սգեալ են :

« Եւ յուսամ յԱստուած , զի եւ այլք հարուստ
անձինք ազգու Հայոց , յետ ծաշակելոյ զբողոքու-
թիւն ուսման դպրատանն զորս իմով միջնորդու-
թեամբ սկսանի , եւ նորս իմոց շարքսն հետեւե-
ցեն , եւ այնոս կարելի լինիցի սիրելի ի մեջ ազգիս ,
եթե ոչ բոլորովին գոնե ըստ մասին , զոչս զի-
տութեան եւ իմաստութեան . եւ անտերուցն ազգս
զարթնոցոս ի քնոյ թմրութեան եւ անհոգութեան :

« Եւ փասն կտուցանելոյ զդպրատանն եւ ի
գործ ղնելոյ զտարեկան անստուտ գնեցեալ գետ-

նոցն , եւ սրագս տնտեսաց ուսման եւ շնորքաց
զորս կամիմ զի տասնիցին մանկունքն ի յիշեալ
դպրատան , եւ փասն որպիսի կարգաւ եւ կանոնիս
ստաշապոսանելոյ զդպրատանն եւ որպիսի վարձ-
ելոյ ընդ նա , զհարծիս իմ յաստակ գրեցեալ
անփակիցի ի յայտ (3) , թողեալ հպատակ ուղ-
ղութեան՝ եթե սխալացեալ լինիցիմ կտակաւա-
տարացն իմոյ եւ հարց Միջնորդարեանց , որոյ միջ-
նորդութեամբ կամիմ զի հատուցի դպրատանն ,
զսխալանս կարծեալ եւ կարգադրութեան իմոյ
ոողղել . իսկ եթե կարծիս եւ կարգադրութիւնս իմ
ոողղի դատուցեն , այնոս անող ստաշապոսան : Եւ
այսքան ատ այս :

« Ութերորդ , իմ քանակութեան տոնն միջի
աշնասովն (2) . . . բոլորն թողման ամ իմ կողմից
Աննե . անանապիս ստացեալ կողակցոյս տոնածս
զարդք եւսյի . . . վերոյստացեալ տներս եւ այ-
գիս էլ յանձնեն իոր : Բայ ի այսոյ՝ իմ ստացուած-
քիցն ամենանն հինգ հարիւր հոռն եւս տան , եւ
ստանայ քանի որ հերն կենդանիս : Իսկ իոր մահ-
ուան ժամանակուն վերոյիշեալ տներն , զարդք եւ
այլն , պարտակունս թողուլ մեր զառակայ եւ թո-
տակն : Իսկ եթե իոր մահուան ժամանակունս Աս-
տուած այնպիս լինի կամեցել որ մեր զառակքն եւ
թոտակքն ստաշագոյն մնամ լինեն , յայնժամ իմ
վերոյիշեալ տներ , այգի , զարդք եւսյիք բոլորն զը-
նայ կտակունս յիշեալ Հայոց որք եւ ստրատ ման-
կանց դպրատանն : Եւ այսքան ատ այս :

« Իններորդ , իմ բոլոր Աննեքն որ այժմ ի կոս-
տանդիկոսայիս է , ամուսնացել էր մին Հայ պա-
րսնի հետ , անուանեալ Պետրոս Ղազարեան . . .
Տեր մի արասիկ , եթե այնպիս պատահի որ բո-
լոր քիւրս զառակունք մնանեն , եւ բոլոր էլ կեն-
դանի ըլինի , յայնժամ ստացեալ հինգ հազար հոռն
զնայ կտակունս յիշեալ հայոց որք եւ ստրատ
մանկանց դպրատանն օգնուցիմ :

« Ութերորդ , տասնեւհինգ հազար
հոռն թողման ամ Մարրասիս որք ստրատաց եւ
տնտեսայն որ սրս անստուտ փայելեն : Այս քա-

1 Այս յաւելուածք ո՛չ կտակին հետ գտնուած է
ոչ անանին :
2 Կահարապիք :

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

• Տ. Խորէն	Եզրակ	Նար-պէյ	ՆՅՆՆՅՅՏ
2. Տ. Խորէն	Վ.	Կիրոյեան	ՆՅՆՆՅՅՏ
5. Տ. Աճրոստիտ	»	Իսկէնտէրեան	ՆՅՆՆՅՅՏ
4. Տ. Գէորգ	»	Գեղձակեան	
5. Տ. Զաքարիա	»	Զիւմրիթեան	
6. Տ. Կարապետ	»	Սերոբեան	
7. Տ. Յովհաննէս	»	Փափաղեան	
8. Տ. Ներսէս	»	Ասլանեան	
9. Տ. Արիստակէս	Բ.	Մամբրէեան	
10. Տ. Գրիգոր	»	Արամեան	
11. Տ. Գրիգոր	»	Աճէմեան	
12. Տ. Երեմիա	»	Խազիւղի	
15. Տ. Սուքիաս	»	Ստեփաննոսեան	
14. Տ. Վարդանէս	»	Միջագիւղի	

ԲԱՂԱՅԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Սիմոն	Մարտունեան	պէյ	ՆՅՆՆՅՅՏ
2. Միքայէլ	Մամիկոնեան	էֆէնտի	ՆՅՆՆՅՅՏ
5. Արրահամ	Հարենց	»	
4. Ասափա	Եկեղապաղեան	»	
6. Խաչիկ	Ալեանաբեան	»	
8. Կարապետ	Փափաղեան	»	
7. Մկրտիչ	Խսեան	»	
8. Յակոբ	Կոստանդ	»	
9. Յարութիւն	Գալամանեան	»	
10. Սարգիս	Արրահամեան	»	
11. Սարգիս	Արապեան	»	
12. Սիմոն	Միքայէլեան	»	
15. Սիմոն	Նորատունկեան	»	
14. Ստեփան	Խնգիրեան	»	

Գ Ի Ն 2 Ղ Ր Ո Ւ Շ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԵՒՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԳԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՑ ԾԱՏԿԱՑԵԱԼ

Կը ճախոշի ի Դիշանատան Պատրիարքարանի, և Ղաչարիոյ Ս. Լոռսաւորի: Եկեղեցոյ բանկայր և Հայ գրաւիւծաւաց քով: